ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/45

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2017թ. թիվ 03/26-3/16224-17 գրությամբ «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 05.09.2017թ. թիվ ԼԱ/06.1/11042-17 գրության հիման վրա, 07.09.2017թ. թիվ 03/26-3/16224-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ առողջապահության նախարարությունը 05.09.2017թ. թիվ ԼԱ/06.1/11042-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ «Գլյուկոմետրի թեստ-երիզներ» ձեռքբերելու նպատակով իրականացվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2017/19» ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ն: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի, «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ին 25.08.2017թ. ծանուցվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Փաստաթղթերը ներկայացնելուց հետո արձանագրվել է տեխնիկական բնութագրի անհամապատասխանություն, մասնավորապես պահանջվող քանակի մասով: Համաձայն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի, «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, արդյունքում վերջինիս կողմից ներկայացված հայտը մերժվել է»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ առողջապահության նախարարության գնումների մասնագետ Հասմիկ Մնացականյանը:

3. <u>«Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Խորհուրդը դիմել է «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.09.2017թ. թիվ 03/26-3/16224-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդում տեղի ունեցած նիստին մասնակցում էր Ընկերության տնօրեն Գեղամ Մոսինյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/45 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2017թ. թիվ 03/26-3/16224-17 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ առողջապահության նախարարության 05.09.2017թ. թիվ ԼԱ/06.1/11042-17 գրությունը, «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2017/19» գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև հրավեր), «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2017/19» գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.08.2017թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 2, 28.08.2017թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 3, 30.08.2017թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 4 արձանագրությունները, «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2017/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ գլյուկոմետրի թեստ-երիզների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2017/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2017/19» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հանձնաժողովը 25.08.2017թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 7-րդ կետով Ընկերությանը ճանաչել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 8-րդ կետով Հանձնաժողովը որոշել է առաջարկել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը 28.08.2017թ. ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 6.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից

առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը՝ հետևյալ բովանդակությամբ. «Թեստ-երիզներ REF 06454011136 նախատեսված Ակկու-Չեք Պերֆորմա սարքի համար, Ֆորմատը՝ 1 հատ, Նմուշի տեսակը՝ մազանոթային արյուն, Չափման մեթոդ՝ էլեկտրոքիմիական, Չափման միջակայքը՝ 0.6-33.3 մմոլ/լ, Չափման ժամանակահատվածը՝ առավելագույնը 5 վրկ, Արյան ծավալը՝ նվազագույնը 0.6 մկլ, Աշխատանքային ջերմաստիճանը՝ 8-44,°C, Կալիբրացիա՝ համակարգը կալիբրավորված է ըստ երակային արյան, որը հիմնված է հեքսոկինազային մեթոդի վրա և համապատասխանում է NIST չափորոշիչին, Ֆերմենտ՝ Mut. Q-GDH 2 կայուն թթվածնի ազդեցության հանդեպ, Ճշգրտությունը՝ համակարգը համապատասխանում է EN ISO 15197 չափորոշիչների պահանջներին»:

Նույն հավելվածով Ընկերությունը նշել է՝ հետևյալը. «ներկայացվել է ոչ թե 4500 հատ ստրիպի գումար, որոնցից յուրաքանչյուր 50 հատը տեղավորված է 1 սրվակի մեջ, այսինքն ներկայացված է գնառաջարկ 90 սրվակի համար»:

28.08.2017թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, ուստի Հանձնաժողովը որոշեց առաջարկել «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ին մեկօրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

Նույն օրը Պատվիրատուն էլեկտրոնային եղանակով «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ին ուղարկել է ծանուցում, որում Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունների վերաբերյալ, մասնավորապես, նշել է հետյալը. «1.Գնային առաջարկը ներկայացրել եք 90 տուփ գլյուկոմետր թեստ-երիզների համար, մինչդեռ պահանջվում է 4500 տուփ: 2. Հրավերով սահմանված է ֆորմատը 50 հատ, Ընկերությունն առաջարկում է 1 հատ:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ ուղղել անհամապատասխանությունը մինչև 29.08.2017թ. ժամը 12:00-ն:»:

30.08.2017թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկել արձանագրված

անհամապատասխանությունները և այդ հիմնավորմամբ որոշում է ընդունել մերժել Ընկերության հայտը:

Խորհրդում 12.09.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ի տնօրենը ընդունեց, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի N 6.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, Ընկերության կողմից ապրանքի տեխնիկական բնութագրում նշվել է «ֆորմատը՝ 1 հատ», այսինքն, ներկայացված գնի առաջարկը նախատեսված է ոչ թե 4500 տուփ, այլ 4500 հատ թեստ-երիզի համար, որոնցից յուրաքանչյուր 50 հատը տեղավորված է 1 տուփի մեջ: Այսինքն, Ընկերության կողմից ներկայացվել է գնի առաջարկ 90 տուփ թեստ-երիզի համար:

Պատվիրատուի ներկայացուցիչը ընդունեց, որ Հանձնաժողովը չի կատարել Կարգի 46-րդ, ինչպես նաև Հրավերի 8.17-րդ կետերով սահմանված՝ հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրված անհամապատասխանությունները պարտադիր և մանրամասն նկարագրելու պահանջը:

Սակայն, Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ 28.09.2017թ. Հանձնաժողովի կողմից Ընկերությանն ուղարկվել է ծանուցում, որում մատնանշվել են Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունները և առաջարկվել է շտկել դրանք մեկօրյա ժամկետում, ինչը Ընկերության կողմից չի կատարվել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից

երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

• 46-րդ կետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ»» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով

ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Հրավերի 8.17 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը նույն հրավերի պահանջներին, իսկ անհամա-պատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

Հրավերի 8.19 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր

կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

Հրավերի 8.20 կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, մասնավորապես՝ պահանջվող ապրանքի քանակական ցուցանիշի մասով:

Միաժամանակ, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ մերժելով Ընկերության հայտը, խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 46-րդ և Հրավերի 8.17 կետերով սահմանված պահանջները, քանի որ վերջինիս կողմից Ընկերությանն ուղարկված ծանուցմանը կից նիստի արձանագրությունը չի պարունակել գնահատման արդյունքում Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների սպառիչ և մանրամասն նկարագրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2017թ. թիվ 03/26-3/16224-17 գրությամբ «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ